



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Անհատ Չեղարկատեր (աուդիտոր)
ԱՇՈՏ ՄՈՎԱԵՄԵՅԱՆ
Լիցենզիա ԱԾ № 021
Աուդիտորի վկայական № 162

ք. Երևան, Նոր Նորրի
8-րդ գանգված 33/27
հեռ.(3749) 403821

№ 24

«19» մայիս 2008թ.

ԱՌԴԴՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ

2007թ.-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Աուդիտի է ենթարկվել «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 01.01.2008թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի (2007թ.-ի) ֆինանսական արդյունքների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Իրականացվել է ՀՀ Կենտրոնական բանկին ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում՝ տեխնիկական պահուստների, հիմնական տնտեսական նորմատիվների պահանջների, տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների տեղաբաշխման «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը:

Աուդիտորի պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ մեր աուդիտորի պարտականությունն է տալ կարծիք հետևյալի մասին.

- 1) Ընկերության ներքին աուդիտի գործունեության, ներքին հսկողության համակարգի՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին,
- 2) Ընկերության ներքին տեղեկատվական համակարգի առկայության կամ որակի մասին,
- 3) Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ամբողջականության և հավաստիության մասին:

Աուդիտն իր մեջ ներառում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք թույլ են տալիս գնահատել հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիությունը:

Աուդիտն իրականացվել է աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ աուդիտը պլանավորվի և իրականացվի ֆինանսական հաշվետվությունները էական - խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը և բացահայտումները: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը: Իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում աուդիտորական կարծիք արտահայտելու համար:

Իրականացված աուդիտի արդյուքում ընկերության ներքին տեղեկատվական համակարգում հայտնաբերվել են թերություններ, որոնք ամբողջապես ներկայացվել են աուդիտորական հաշվետվության մեջ:

Բացառության վերը նշված հանգամանքների հնարավոր բացասական ազդեցության «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ գործունեությունը համապատասխանում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներին: ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, Ընկերության առ 01.01.2008թ.-ը կազմված տարեկան ֆինանսական հաշվետվությունները տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, կազմված են ՀՀ Հաշվապահական հաշվառման ստանդարտների, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և ապահովագրական գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Անհատ ձեռնակատեր /



/ Ա. Սուկետյան /